ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 38 35

_____N_____

Ի պատասխան Ձեր՝29.12.2021թ. հարցման

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն:

2.Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վրա:

3. Վերոնշյալ վիճակագրությունը ձևավորվում է մի քանի աղբյուրից. էլեկտրոնային հարցումների հարթակ, փոստ, Mulberry համակարգ:

4.Վերոնշյալ վիճակագրությունը հրապարակվում է Արագածոտնի մարզպետարանի կայքում՝ «Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն» խորագրի «Գրավոր հարցումների վերաբերյալ վիճակագրություն» ենթաբաժնում (լինկը՝ http://aragatsotn.mtad.am/harcum/):

5.Տեղեկատվության ազատության համար պատասխանատու է մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը:

6. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղարի N 407 հրամանով Նանե Ավանեսյանը նշանակվել է Արագածոտնի մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ: Համապատասխան իրավական ակտի պատճենը՝ կից:

7. Մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի թափուր հաստիքը նախորդ տարվա դեկտեմբերին է համալրվել (17.12.2021թ.)՝ մրցույթի արդյունքով: Ուստի, նախորդ տարում նշված բաժնի գործառույթները իրականացրել է մարզպետի օգնական Մերի Բաղալյանը: Նա մասնակցել է ստորև նշված դասընթացներին.

- «Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար», առցանց, ապրիլի 21-23,2021 թ., կազմակերպիչ՝ ԻԱԿ:
- «Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում», առցանց, փետրվարի 18-19, 2021 թ., կազմակերպիչ՝ ԻԱԿ:

- Արտակարգ իրավիճակներում լրագրողների գործունեության կազմակերպման թեմայով դասընթաց, հոկտեմբեր, 2021թ., կազմակերպիչ՝ ԱԻՆ:

Հավելենք, որ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնում վերջերս նշանակված Նանե Ավանեսյանը ավարտել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը (2013թ.) և որպես առանձին առարկա ուսումնասիրել է «ՁԼՄ օրենսդրություն» դասընթացը (դասավանդող՝ Շուշան Դոյդոյան), որը ներառում է տեղեկատվության ազատությանն առնչվող հիմնարար գիտելիքներ: Այլ դասընթացի Նանե Ավանեսյանը չի մասնակցել:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ Նանե Ավանեսյան
(0232) 34226